

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

-----/-----/2011 թիվ -----Ն

**«ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ,
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/08-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, որպես կուրակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների ռեեստրը վարողի վերահսկող մարմին, ինչպես ընթացիկ ֆինանսական վերահսկողության, այնպես էլ հանրային իրազեկման նպատակով, պարտավոր է պարզաճ պարբերարականությամբ և մանրամասնությամբ վերլուծել և հրապարակել ըմբռնելի և արժանահավատ տեղեկատվություն պարտադիր կուրակային կենսաթոշակային բաղադրիչի մասին,

Նպատակ ունենալով բացահայտել կենսաթոշակային ֆոնդերում պարտադիր կուրակային կենսաթոշակային բաղադրիչի պարտադիր և կամավոր մասնակցությունը, ինչպես նաև հրապարակել վերլուծություններ կուրակային կենսաթոշակային համակարգի նշանակալի զարգացումների մասին և դրանով իսկ ապահովել կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների և հանրության վստահությունը պարտադիր կուրակային կենսաթոշակային բաղադրիչի թափանցիկության նկատմամբ և

Հիմք ընդունելով «Կուրակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

որոշում է

1. Հաստատել «Մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,

բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ը՝
համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝**

Արթուր Ջավադյան

**2011 թվական, -----
Երևան**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/08

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունները, դրանց կազմը, բովանդակությունը, ներակայացման կարգը և պարբերականությունը:
2. Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում գումարները արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ մեկ դրամի ճշտությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
 - 1) **ամսաթիվ**՝ ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը,
 - 2) **հաշվետու տարի**՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Մասնակիցների ռեեստրը վարողի համար առաջին հաշվետու տարի է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ մասնակիցների ռեեստրը վարելու պայմանագիր կնքելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:
 - 3) **հաշվետու ամիս**՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Մասնակիցների

ռեեստրը վարողի համար առաջին հաշվետու ամիս է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ մասնակիցների ռեեստրը վարելու պայմանագիր կնքելու օրվանից մինչև տվյալ ամսվա ավարտն ընկած ժամանակաշրջանը:

4) **հաշվետու ժամանակաշրջան՝** հաշվետու ամիս կամ հաշվետու տարի:

- Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» (այսուհետև՝ Օրենք) և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մասնակիցների ռեեստրը վարողը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝ նշված պարբերականությամբ.

Հ/Հ	Հաշվետվության անվանումը	Ներկայացման պարբերականությունը
1.	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների և նրանց պատկանող փայերի վերաբերյալ	ամսական
2.	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի թողարկման և մարման վերաբերյալ	ամսական
3.	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայատերերի փայերի համախառն արժեքի գումարի բաշխման վերաբերյալ	տարեկան
4.	Պարտադիր կուտակային կենսաթոշակների վճարման վերաբերյալ	տարեկան
5.	Նոր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, փայերի փոխանակման վերաբերյալ	տարեկան

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

- Սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵԹ միջբանկային համակարգչային ցանցի (այսուհետև՝ ՍԻ ԲԻ ԷՅ ՆԵԹ) միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից ստեղծված և մասնակիցների ռեեստրը վարողին ուղարկված պաշտպանված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան, որոնց ձևերը սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 1-5-ով:
- ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵԹ-ին միացված չլինելու դեպքում հաշվետվության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի

խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային այլ կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

8. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:
9. Հաշվետվության անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

Մասնակիցների ռեեստրը վարողի կոդը	գծիկ	հաշվետվության համարը	կետ	հապավումը
↓	↓	↓	↓	↓
XXXXX	-	XX	.	xls

ընդ որում, «Հաշվետվության համարը» սյունակում լրացվում է սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված «Հաշվետվության թիվը» սյունակում նշված համարը (Թիվ 1 հաշվետվության լրացման դեպքում սույն սյունակում լրացվում է 01, Թիվ 2-ի դեպքում՝ 02 և այլն): Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

10. Հաշվետվությունների ֆայլերը պետք է պարունակեն թվային հավաստագիր (բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվությունները ներկայացվում են Սի-Բի-Էյ նեթ-ով):
11. Թիվ 3, 4 և 5 հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 15-ը ներառյալ:
12. Ամսական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը ներառյալ:
13. Ամսական հաշվետվություններում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանը բնութագրող ամիսը՝ տառերով:
14. Տարեկան հաշվետվություններում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանը բնութագրող տարեթիվը՝ թվերով:
15. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
16. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 6-րդ կետի համաձայն, ընդ որում, մի քանի ճշգրտված տարբերակների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին տարբերակը:
17. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, այն չպետք է լրացվի «յունիկոդ»-ով, երկու լրացված ամբողջական տողերի (ոչ յուրաքանչյուր սյունակի երկու լրացված տողերի) միջև դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի

տարածվում մասնակիցների ռեեստրը վարողի վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

18. Հաշվետվությունները լրացվում են միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան):
19. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ՓԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 1 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Թիվ 1 հաշվետվությունում (ամսական) լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող ամսվա ընթացքում ֆոնդերի մասնակիցների և նրանց պատկանող փայերի վերաբերյալ տեղեկությունները:
21. Թիվ 1 հաշվետվության 2-6-րդ աղյուսակների 1-6-րդ սյունակների ներքևի տողերում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կոդերը:
22. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
 - 1) **«Համախառն ստացված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ»** տողի «գումարը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվա դրությամբ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից ստացված կուտակային վճարների համախառն գումարը:
 - 2) **«Փայերի վերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում»** տողի «գումարը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից փայերի վերածված կուտակային վճարների համախառն գումարը:
 - 3) **«Փայերի չվերածված կուտակային վճարների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ»** սյունակի «գումարը» սյունակում լրացվում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված և հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ դեռևս փայերի չվերածված կուտակային վճարների մեծությունը:
23. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) «**Կենսաթոշակային հաշվի տերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, այդ թվում՝**» տողի «անձանց թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային հաշվի տերերի (ներառյալ այն մահացած կենսաթոշակային հաշվետերերի, որոնց համար մասնակիցների ռեեստրը վարողը շարունակում է վարել կենսաթոշակային հաշիվ) ընդհանուր թիվը:
 - 2) «**Ֆոնդի ընտրության դիմումի ներկայացման արդյունքում**» տողի «անձանց թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային հաշվի տերերի ընդհանուր թիվը, որոնց համար կենսաթոշակային հաշիվը բացվել է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացված ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա:
 - 3) «**հարկային մարմնից ստացված տեղեկատվության արդյունքում**» տողի «անձանց թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային հաշվի տերերի ընդհանուր թիվը, որոնց համար կենսաթոշակային հաշիվը բացվել է հարկային մարմնից մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցված տեղեկատվության հիման վրա:
 - 4) «**Ժառանգություն տնօրինման արդյունքում**» «անձանց թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային հաշվի տերերի ընդհանուր թիվը, որոնք չեն հանդիսացել պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից, և որոնց համար մասնակիցների ռեեստր վարողը բացել է կենսաթոշակային հաշիվ և ժառանգված փայերը փոխանցել այդ կենսաթոշակային հաշվին:
 - 5) «**փայեր չունեցող**» տողի «անձանց թիվը» սյունակում լրացվում է Օ-ական հաշվեկշիռ ունեցող կենսաթոշակային հաշվի տերերի ընդհանուր թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ (մասնակիցներ, որոնց կենսաթոշակային հաշվում փայեր չկան մասնակիցների ռեեստրը վարողի կողմից նրանց համար կուտակային վճարներ չստացվելու կամ ֆոնդի ընտրություն չկատարած մասնակցի համար կուտակային վճարները ստանալուց հետո ծրագրային մոդուլի միջոցով ֆոնդի ընտրություն դեռ կատարված չլինելու պատճառով):
 - 6) «**փայեր ունեցող**» տողի «անձանց թիվը» սյունակում լրացվում է բոլոր ֆոնդերի փայատերերի ընդհանուր թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:
24. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
- 1) «**Փայատերերի թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, այդ թվում՝**» տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ֆոնդի փայատերերի (ներառյալ այն մահացած կենսաթոշակային

հաշվետուների, որոնց մահանալու պահին կենսաթոշակային հաշիվներում փայեր են առկա եղել) ընդհանուր թիվը: Սույն տողի 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ մասնակիցների թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

- 2) «**Ծրագրային մոդուլի միջոցով ընտրություն կատարած**» տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ փայեր ունեցող այն մասնակիցների ընդհանուր թիվը, որոնց համար 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի փայերի ձեռքբերումը կատարվել է ծրագրային մոդուլի միջոցով ընտրության արդյունքում: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ մասնակիցների թվի բաշխումը՝ ըստ նրանց համար ընտրված համապատասխան ֆոնդերի:
- 3) «**Ֆոնդի ընտրություն կատարած**» տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ փայեր ունեցող այն մասնակիցների ընդհանուր թիվը, որոնց փայերը ձեռք են բերվել մասնակցի կողմից՝ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացրած կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի համաձայն: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ մասնակիցների թվի բաշխումը՝ ըստ ընտրված համապատասխան ֆոնդերի:
- 4) «**Ժառանգության տնօրինած**» տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ժառանգության տնօրինման արդյունքում 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի փայեր ձեռք բերած մասնակիցների ընդհանուր թիվը (ներառյալ այն անձինք, որոնք չեն հանդիսացել պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից, և որոնց համար մասնակիցների ռեեստր վարողը բացել է կենսաթոշակային հաշիվ և ժառանգված փայերը փոխանցել այդ կենսաթոշակային հաշվին): 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ մասնակիցների թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:
- 5) «**մահացած**» տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ այն մահացած մասնակիցների ընդհանուր թիվը, որոնց կենսաթոշակային հաշիվներում մահանալու պահին առկա են եղել փայեր, որոնք դեռ չեն ժառանգվել կամ ժառանգման ժամկետը չի ավարտվել: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ մահացած մասնակիցների թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

25. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 4-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս ֆոնդերի փայատերերի բաշխումը՝ ըստ նրանց տարիքի և սեռի: Մասնակիցների տարիքը և սեռը նույնականացնելու համար օգտագործվում են մասնակցի անձնագրի, անձը հաստատող այլ փաստաթղթի կամ սոցիալական ապահովության քարտի տվյալները: Հաշվետվությունը կազմողը 1.25-րդ տողից հետո

լրացնում է նոր տողեր՝ հաջորդ տարիներին ծնված նոր մասնակիցների ծննդյան տարեթվերն ընդգրկելու համար:

- 2) **«Փայատերերը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ ըստ տարիքի և սեռի, այդ թվում՝»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բոլոր ֆոնդերի՝ բոլոր տարիներին ծնված և բոլոր սեռերի փայատերերի ընդհանուր թիվը (ներառյալ այն անձանց, ովքեր դարձել են փայատեր ժառանգության տնօրինման արդյունքում): 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ մասնակիցների թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

26. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 5-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Փայերի թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, այդ թվում՝»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բոլոր ֆոնդերի՝ Օրենքով սահմանված փայերի թողարկման բոլոր հիմքերով թողարկված և դեռ չմարված փայերի ընդհանուր թիվը: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:
- 2) **«Ծրագրային մոդուլի միջոցով ընտրությամբ ձեռքբերված»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ այն փայերի ընդհանուր թիվը, որոնք մասնակիցները ձեռք են բերել իրենց համար ծրագրային մոդուլի միջոցով 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի ընտրության արդյունքում: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:
- 3) **«Ֆոնդի ընտրությամբ ձեռքբերված»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի այն փայերի ընդհանուր թիվը, որոնք մասնակիցները ձեռք են բերել՝ մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացրած կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի համաձայն: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:
- 4) **«Ժառանգության տնօրինման արդյունքում ձեռքբերված»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի այն փայերի ընդհանուր թիվը, որոնք ձեռք են բերվել ժառանգության տնօրինման արդյունքում: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:
- 5) **«մահացած մասնակցին պատկանող»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ այն մահացած մասնակիցներին պատկանող փայերի ընդհանուր թիվը, որոնց կենսաթոշակային հաշիվներում մահանալու պահին առկա են եղել 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի փայեր, որոնք դեռ չեն ժառանգվել

կամ ժառանգման ժամկետը չի ավարտվել: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

27. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 6-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) 1.1-1.25 տողերը ցույց են տալիս ֆոնդերի փայերի բաշխումը՝ ըստ փայատերերի տարիքի և սեռի: Մասնակիցների տարիքը և սեռը նույնականացնելու համար օգտագործվում են մասնակցի անձնագրի, անձը հաստատող այլ փաստաթղթի կամ սոցիալական քարտի տվյալները: Հաշվետվությունը կազմողը 1.25-րդ տողից հետո լրացնում է նոր տողեր՝ հաջորդ տարիներին ծնված նոր մասնակիցների ծննդյան տարեթվերն ընդգրկելու համար:

2) **«Փայերը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ ըստ փայատերերի տարիքի և սեռի, այդ թվում՝»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բոլոր ֆոնդերի՝ բոլոր տարիներին ծնված և բոլոր սեռերի փայատերերի համար թողարկված և չմարված փայերի ընդհանուր թիվը: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

28. Թիվ 1 հաշվետվության Աղյուսակ 7-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) **«Կառավարչի փայերի թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ֆոնդի կառավարչին պատկանող՝ բոլոր ֆոնդերի փայերի ընդհանուր թիվը, ներառյալ համապատասխան ֆոնդերում նախորդ կառավարիչների կողմից գնված ֆոնդի փայերը (եթե նախկինում ֆոնդերը կառավարվել են այլ կառավարիչների կողմից): 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

2) **«Մարված փայերի թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բոլոր ֆոնդերի՝ դրանց գրանցման օրվանից հաշված կառավարիչների՝ ներառյալ համապատասխան ֆոնդերում նախորդ կառավարիչների (եթե նախկինում ֆոնդերը կառավարվել են այլ կառավարիչների կողմից) մարած փայերի ընդհանուր թիվը: 1-6-րդ սյունակներում լրացվում է այդ փայերի թվի բաշխումը՝ ըստ համապատասխան ֆոնդերի:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 2 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Թիվ 2 հաշվետվությունում (ամսական) լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող ամսվա ընթացքում պարտադիր

կենսաթոշակային ֆոնդի փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկությունները:

30. Թիվ 2 հաշվետվության 1-3 աղյուսակների 1-6-րդ սյունակների ներքևի տողերում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնց փայերը թողարկվել կամ մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

31. Թիվ 2 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) **«Թողարկված փայերի հաշվարկային արժեք»** տողի 1-6-րդ սյունակներում լրացվում է 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի համար մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը թողարկված փայերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքների գումարը: Սույն տողի «Ընդամենը» սյունակում լրացվում է 1-6-րդ սյունակների հանրագումարը:

2) **«Թողարկման վճար»** տողի 1-6-րդ սյունակներում լրացվում է 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի համար մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը թողարկված փայերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հաշվարկված թողարկման վճարների գումարը: Սույն տողի «Ընդամենը» սյունակում լրացվում է 1-6-րդ սյունակների հանրագումարը:

3) **«Մարված փայերի հաշվարկային արժեք»** տողի 1-6-րդ սյունակներում լրացվում է 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի համար մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը մարված փայերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքների գումարը: Սույն տողի «Ընդամենը» սյունակում լրացվում է 1-6-րդ սյունակների «գումարը» ենթասյունակների հանրագումարը:

4) **«Մարման վճար»** տողի 1-6-րդ սյունակներում լրացվում է 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի համար մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը մարված փայերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ հաշվարկված մարման վճարների գումարը: Սույն տողի «Ընդամենը» սյունակում լրացվում է 1-6-րդ սյունակների հանրագումարը:

32. Թիվ 2 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

1) **«Թողարկված փայերը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, այդ թվում՝»** տողի 1-6-րդ սյունակների «անձինք» ենթասյունակներում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ յուրաքանչյուր ֆոնդում՝ 1-ից ավել մասնակիցների թիվը, իսկ «քանակը» ենթասյունակներում՝ նրանց համար թողարկված փայերի քանակը: Սույն տողի «Ընդամենը» սյունակում լրացվում են 1-6-րդ

սյունակների համապատասխանաբար «անձինք» և «քանակը» ենթասյունակների հանրագումարները:

- 2) Սույն տողի 1.1-1.5-րդ ենթատողերի 1-6-րդ սյունակների «անձինք» ենթասյունակներում լրացվում է մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են թողարկվել Օրենքով սահմանված հետևյալ հիմքերով.

ա. **«Կուտակային վճարներ»** ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են թողարկվել հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին ուղարկած կուտակային վճարների հիման վրա,

բ. **«Փայերի փոխանակում»** ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են թողարկվել փայերի փոխանակման արդյունքում,

գ. **«Կառավարչի փոխհատուցում»** ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են թողարկվել կառավարչի կողմից ֆոնդերի մասնակիցներին պատճառված վնասի փոխհատուցման արդյունքում, երբ փոխհատուցման գումարը ներառվել է ֆոնդի ակտիվների կազմում և դրա արդյունքում թողարկվել են համապատասխան ֆոնդերի լրացուցիչ փայեր,

դ. **«Երաշխիքային ֆոնդից վճարներ»** ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են թողարկվել երաշխիքային ֆոնդից կատարված հատուցման գումարի վճարման արդյունքում, երբ հատուցման գումարով թողարկվել են համապատասխան ֆոնդերի լրացուցիչ փայեր:

ե. **«Այլ»** ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են թողարկվել այլ հիմքերով:

- 3) Սույն տողի 1.1-1.5-րդ ենթատողերի «քանակը» ենթասյունակներում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ 1-6-րդ սյունակներում նշված համապատասխան ֆոնդերի համար թողարկված փայերի քանակը:

- 4) Սույն տողի 1.1-1.5-րդ ենթատողերի «Ընդամենը» սյունակում լրացվում է 1-6-րդ սյունակների համապատասխանաբար «անձինք» և «քանակը» ենթասյունակների հանրագումարները:

33. Թիվ 2 հաշվետվության Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Մարված փայերը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, այդ թվում՝»** տողի համապատասխանաբար 1-6-րդ սյունակների «անձինք» ենթասյունակներում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ այն անձանց թիվը, ում համար մարվել են փայերը, իսկ «քանակը» ենթասյունակներում լրացվում է նրանց համար համապատասխան ֆոնդերից մարված փայերի քանակը: Սույն տողի «Ընդամենը» սյունակում լրացվում են 1-6-րդ սյունակների

համապատասխանաբար «անձինք» և «քանակը» ենթասյունակների հանրագումարները:

2) Սույն տողի 1.1-1.5-րդ ենթատողերի 1-6-րդ սյունակների «անձինք» ենթասյունակներում լրացվում է մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են մարվել Օրենքով սահմանված հետեւյալ հիմքերով.

ա. «**Ֆոնդի փայերի փոխանակում**» ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են մարվել ֆոնդի փայերի փոխանակման արդյունքում,

բ. «**Ապահովագրական պայմանագրի հիման վրա**» ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են մարվել մասնակցի կողմից ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա մարմված փայերի գումարը ապահովագրական ընկերությանը փոխանցելու արդյունքում,

գ. «**Ծրագրային վճարներ**» ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են մարվել ծրագրային վճարների կատարման արդյունքում,

դ. «**Միանվագ վճարներ**» ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են մարվել միանվագ վճարների կատարման արդյունքում, ընդ որում՝ բաշխելով դրանք հերթականությամբ՝ ըստ Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված հիմքերի:

ե. «**Սխալ գործարքների շտկում, այդ թվում՝**» ենթատողում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնց համար փայեր են մարվել մասնակիցների կենսաթոշակային հաշվում կատարված սխալ գործարքների շտկման համար, ընդ որում՝ 1.5.1 ենթատողում՝ դատական ակտի հիման վրա, 1.5.2 ստուգման ակտի հիման վրա, 1.5.3 ենթատողում՝ կենսաթոշակային հաշվի տիրոջ կողմից բացահայտված այլ պատճառներով:

3) Սույն տողի 1.1-1.5-րդ ենթատողերի «քանակը» ենթասյունակներում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ 1-6-րդ սյունակներում նշված ֆոնդերի համար մարված փայերի քանակը:

4) Սույն տողի 1.1-1.5-րդ ենթատողերի «Ընդամենը» սյունակում լրացվում է 1-6-րդ սյունակների համապատասխանաբար «անձինք» և «քանակը» ենթասյունակների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 7. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ՓԱՅԵՐԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԺԵՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Թիվ 3 հաշվետվությունում (տարեկան) ներկայացվում են հաշվետվության ներկայացման տարվան նախորդող 12 ամիսների ընթացքում փայատերերի փայերի համախառն արժեքի գումարի բաշխման, ինչպես նաև տարբեր ֆոնդերի փայեր ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները:

35. Թիվ 3 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Փայատերերը՝ ըստ տարիքի և սեռի»** սյունակի 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս ֆոնդերի փայատերերի բաշխումը՝ ըստ նրանց տարիքի և սեռի: Մասնակիցների տարիքը և սեռը նույնականացնելու համար օգտագործվում են մասնակցի անձնագրի, անձը հաստատող այլ փաստաթղթի կամ սոցիալական ապահովության քարտի տվյալները: Հաշվետվությունը կազմողը 1.25-րդ տողից հետո լրացնում է նոր տողեր՝ հաջորդ տարիներին ծնված նոր մասնակիցների ծննդյան տարեթվերն ընդգրկելու համար:
- 2) **«Փայերի հաշվարկային արժեքների գումարը»** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համապատասխան մասնակիցների համար թողարկված փայերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքների գումարը:
- 3) **«անձանց թիվը՝ ըստ ձեռք բերված փայերի հաշվարկային արժեքների համախառն մեծության»** սյունակի 3-8-րդ ենթասյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում է այն մասնակիցների թիվը, ովքեր հաշվետու տարվա ընթացքում ձեռք են բերել սույն ենթասյունակներում նշված մեծությունների միջակայքում ընկած համախառն հաշվարկային արժեքներով փայեր՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքով:
- 4) **«Ընդամենը»** տողի **«Փայերի հաշվարկային արժեքների գումարը»** սյունակում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը բոլոր տարիքի և սեռի փայատերերի համար թողարկված փայերի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքների գումարը: Սույն տողի 3-8-րդ սյունակներում լրացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը բոլոր տարիքի և սեռի մասնակիցների թիվը, ովքեր հաշվետու տարվա ընթացքում ձեռք են բերել սույն ենթասյունակներում նշված մեծությունների միջակայքում ընկած համախառն հաշվարկային արժեքներով փայեր՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ հրապարակված հաշվարկային արժեքով:

36. Թիվ 3 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Փայատերերը՝ ըստ տարիքի և սեռի»** սյունակի 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս ֆոնդի փայատերերի բաշխումը՝ ըստ նրանց տարիքի և սեռի: Մասնակիցների տարիքը և սեռը նույնականացնելու համար օգտագործվում են մասնակցի անձնագրի, անձը հաստատող այլ փաստաթղթի կամ սոցիալական ապահովության քարտի տվյալները:

Հաշվետվությունը կազմողը 1.25-րդ տողից հետո լրացնում է նոր տողեր՝ հաջորդ տարիներին ծնված նոր մասնակիցներին ընդգրկելու համար:

- 2) 1-6-րդ սյունակների ներքևի տողերում լրացվում են բոլոր այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնց փայատերեր են դարձել 1.1-1.25-րդ տողերում նշված անձինք մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը:
- 3) 1.1-1.25-րդ տողերի 1-6-րդ սյունակներում լրացվում են համապատասխան տարիքի և սեռի այն փայատերերի թիվը, ովքեր մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը միաժամանակ ունեցել են 1-6-րդ սյունակներում նշված մի-քանի ֆոնդերի փայտեր:
- 4) **«Ընդամենը»** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում են 1-6-րդ սյունակներում նշված բոլոր ֆոնդերի փայատերերի թվերի հանրագումարները:
- 5) **«Ընդամենը»** տողի «ընդամենը» սյունակում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը բոլոր տարիքի և սեռի փայատերերի քանակը, ովքեր միաժամանակ ունեցել են 1-6-րդ սյունակներում նշված մի-քանի ֆոնդերի փայտեր: Սույն տողի 1-6-րդ սյունակներում լրացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը բոլոր տարիքի և սեռի փայատերերի թիվը, ովքեր միաժամանակ ունեցել են 1-6-րդ սյունակներում նշված համապատասխան ֆոնդի փայտեր:

ԳԼՈՒԽ 8. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 4 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Թիվ 4 հաշվետվությունում (տարեկան) լրացվում են հաշվետվության ներկայացման տարվան նախորդող 12 ամիսների ընթացքում կատարված պարտադիր կուտակային կենսաթոշակների վճարման վերաբերյալ տեղեկությունները:
38. Թիվ 4 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
 - 1) **«Կենսաթոշակառուները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ ըստ տարիքի և սեռի»** տողի 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պարտադիր կուտակային կենսաթոշակ ստացող մասնակիցների բաշխումը՝ ըստ նրանց տարիքի և սեռի: Մասնակիցների տարիքը և սեռը նույնականացնելու համար օգտագործվում են մասնակցի անձնագրի, անձը հաստատող այլ փաստաթղթի կամ սոցիալական ապահովության քարտի տվյալները: Հաշվետվությունը կազմողը 1.25-րդ տողից հետո լրացնում է նոր տողեր՝ հաջորդ տարիներին ծնված նոր մասնակիցներին ընդգրկելու համար:
 - 2) **«Գումարը»** սյունակի 1.1-ից 1.25-րդ տողերում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը համապատասխան տարիքի և

սեռի մասնակիցներին վճարված կենսաթոշակների մեծությունը՝ հաշվարկված փայերի մարման օրվա մարման գներով:

- 3) **«Անձանց թիվը»** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների ընդհանուր թիվը, ում կատարվել են «վճարված կենսաթոշակների մեծությունը» սյունակում նշված միջակայքերում ընկած մեծությամբ հանրագումարային կենսաթոշակների վճարումներ:
- 4) **«վճարված կենսաթոշակների մեծությունը»** սյունակի 4-9-րդ ենթասյունակներում 1.1-1.25-րդ տողերից յուրաքանչյուրի համար լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապատասխան մեծության պարտադիր կուտակային կենսաթոշակներ ստացած մասնակիցների թիվը:
- 5) **«Ընդամենը»** տողի «Գումարը» սյունակում լրացվում է բոլոր տարիքի և սեռի մասնակիցների վճարված կենսաթոշակների մեծությունը՝ հաշվարկված փայերի մարման օրվա մարման գներով: Սույն տողի «Անձանց թիվը» սյունակում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը բոլոր տարիքի և սեռի այն մասնակիցների ընդհանուր թիվը, ում կատարվել են «վճարված կենսաթոշակների մեծությունը» սյունակում նշված միջակայքերում ընկած մեծությամբ հանրագումարային կենսաթոշակների վճարումներ: Սույն տողի 4-9-րդ սյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը բոլոր տարիքի և սեռի մասնակիցների թիվը, ում վճարվել են 4-9-րդ սյունակների համապատասխան միջակայքերում նշված մեծությունների կենսաթոշակներ:

39. Թիվ 4 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Կենսաթոշակառուները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ ըստ տարիքի և սեռի»** սյունակի 1.1-1.25-րդ տողերը ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պարտադիր կուտակային կենսաթոշակ ստացող մասնակիցների բաշխումը՝ ըստ նրանց տարիքի և սեռի: Մասնակիցների տարիքը և սեռը նույնականացնելու համար օգտագործվում են մասնակցի անձնագրի, անձը հաստատող այլ փաստաթղթի կամ սոցիալական ապահովության քարտի տվյալները: Հաշվետվությունը կազմողը 1.25-րդ տողից հետո լրացնում է նոր տողեր՝ հաջորդ տարիներին ծնված նոր մասնակիցների ծննդյան տարեթվերն ընդգրկելու համար:
- 2) **«Ապահովագրությամբ»** սյունակի համապատասխանաբար «անձանց թիվը» և «գումարը» ենթասյունակների 1.1-1.25-րդ տողերում լրացվում է համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների թիվը և վճարված կենսաթոշակի չափը, ում համար հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցի փայերը մարել է և ստացված դրամական միջոցները

փոխանցել մասնակցի ընտրած ապահովագրական ընկերությանը՝ մասնակցի գրավոր դիմումի համաձայն:

- 3) **«Ծրագրային վճար»** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում է համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների թիվը և վճարված կենսաթոշակի չափը, ում համար մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային վճարումներ է կատարել ծրագրային վճարների տեսքով:
- 4) **«միանվագ վճար»** սյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում է համապատասխան տարիքի և սեռի այն անձանց թիվը և վճարված դրամական միջոցների չափը, ում համար մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային վճարումներ է կատարել միանվագ վճարների տեսքով, ընդ որում՝ բաշխելով դրանք հերթականությամբ՝ ըստ Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված հիմքերի:
- 5) **«Մնացորդը»** սյունակի «Անձանց թիվը» ենթասյունակում լրացվում է 1.1-1.25-րդ տողերում նշված համապատասխան տարիքի և սեռի անձանց թիվը, ում կենսաթոշակային հաշիվներում հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա են եղել մնացորդային փայեր: Սույն սյունակի «քանակը» ենթասյունակի 1.1-1.25-րդ տողերում լրացվում է հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխան տարիքի և սեռի անձանց կենսաթոշակային հաշիվներում առկա փայերի՝ մնացորդը:
- 6) **«Ընդամենը»** տողի 2-15-րդ սյունակներում լրացվում է 1.1-1.25-րդ տողերում նշված բոլոր տարիքի և սեռի անձանց համար համապատասխանաբար 2-15-րդ սյունակներում լրացված մեծությունների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 9. ՆՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Թիվ 5 հաշվետվությունում (տարեկան) ներկայացվում են հաշվետվության ներկայացման տարվան նախորդող 12 ամիսների ընթացքում նոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդին հետագա կուտակային վճարներն ուղղելու, ինչպես նաև ֆոնդերի փայերի փոխանակման վերաբերյալ տեղեկությունները:
41. Թիվ 5 հաշվետվության Աղյուսակ 1-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
 - 1) **«Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ»** սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնց ուղղվել են մասնակիցների հետագա կուտակային վճարները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:
 - 2) **«Ֆոնդը, որին դադարել են կատարել կուտակային վճարներ»** սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում են Հայաստանի Հանրապետության

տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կոդերը, որոնց կուտակային վճարներ այլևս չեն կատարվել՝ հետագա կուտակային վճարները **«Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ»** սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդին ուղղելու նպատակով:

- 3) **«Փոխանակման տվյալներ»** սյունակում «Անձանց թիվը» ենթատողերի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն մասնակիցների թիվը, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դիմում են ներկայացրել դադարեցնելու կուտակային վճարները տվյալ ֆոնդին և դրանք ուղղելու **«Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ»** սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին:
- 4) **«Փոխանակման տվյալներ»** սյունակի բոլոր «միջին կուտակային վճարը» ենթատողերի համար 3-8-րդ սյունակներում յուրաքանչյուր ֆոնդի համար լրացվում է մասնակիցների կողմից կատարված կուտակային վճարների միջին կշռված մեծությունը (կշռված մասնակիցների քանակով) մինչև հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում այն պահը, երբ կուտակային վճարների կատարումն այլևս դադարել է:
- 5) **«Ընդամենը»** սյունակի «անձանց թիվը» ենթատողերում լրացվում է այն մասնակիցների ընդհանուր թիվը, ովքեր մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը դիմում են ներկայացրել հետագա կուտակային վճարներն ուղղելու **«Ֆոնդը, որին սկսել են կատարել կուտակային վճարներ»** սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին, իսկ «միջին կուտակային վճարը» ենթատողերի համար լրացվում է միջին կշռված կուտակային վճարների հանրագումարը, որը կատարվել է 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերում մինչև դրանցում կուտակային վճարների կատարումը դադարելը:
- 6) **«Ընդամենը»** տողի «անձանց թիվը» ենթատողի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն մասնակիցների ընդհանուր թիվը, ովքեր մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը դիմում են ներկայացրել դադարեցնելու 3-8-րդ ենթասյունակներում նշված տվյալ ֆոնդում կուտակային վճարներ կատարելը և հետագա կուտակային վճարներն ուղղել են 2-7-րդ տողերում նշված ֆոնդերին: Սույն տողի «միջին կուտակային վճարը» ենթատողերի 3-8-րդ սյունակներում լրացվում է միջին կուտակային վճարների հանրագումարը, որը կատարվել է 3-8-րդ սյունակներում նշված տվյալ ֆոնդում մինչև դրանում կուտակային վճարների կատարումը դադարելը:

42. Թիվ 5 հաշվետվության Աղյուսակ 2-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Ֆոնդը, որի փայերի հետ փոխանակվել են նախկին փայերը»** սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների

ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնց փայերի հետ փոխանակվել են նախկին ֆոնդի փայերը մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը:

- 2) «**Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ**» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնց փայերը փոխանակվել են «Ֆոնդը, որի փայերի հետ փոխանակվել են նախկին փայերը» սյունակում նշված ֆոնդի փայերով:
- 3) «**Փոխանակման տվյալներ**» սյունակի «**անձանց թիվը**» ենթատողերի «Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն անձանց թիվը, որոնք մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմում են ներկայացրել մասնակիցների ռեեստրը վարողին:
- 4) «**Փոխանակման տվյալներ**» սյունակի «**Փոխանակված գումարը**» ենթատողերի «Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համապատասխան ֆոնդերի միջև փոխանակված գումարների մեծությունները:
- 5) «**Ընդամենը**» սյունակի «անձանց թիվը» ենթատողերում լրացվում է այն մասնակիցների ընդհանուր թիվը, ովքեր մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը դիմում են ներկայացրել «Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերի իրենց փայերը փոխանակելու «Ֆոնդը, որի փայերի հետ փոխանակվել են նախկին փայերը» սյունակում նշված տվյալ ֆոնդի փայերի հետ: Սույն սյունակի «փոխանակված գումարը» ենթատողերում լրացվում է «Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերի փայերը «Ֆոնդը, որի փայերի հետ փոխանակվել են նախկին փայերը» 1-ին սյունակում նշված տվյալ ֆոնդի փայերի հետ փոխանակված ընդհանուր գումարը:
- 6) «**Ընդամենը**» տողի «անձանց թիվը» ենթատողի «Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն մասնակիցների ընդհանուր թիվը, ովքեր մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը մասնակիցների ռեեստր վարողին դիմում են ներկայացրել տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու «Ֆոնդը, որի փայերի հետ փոխանակվել են նախկին փայերը» 1-ին սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերի հետ: Սույն տողի «փոխանակված գումարը» ենթատողի «Ֆոնդը, որի փայերը փոխանակվել են նոր փայերի հետ» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում

լրացվում է տվյալ ֆոնդի փայերը 2-7-րդ տողերում նշված ֆոնդի փայերի հետ փոխանակման գումարի ընդհանուր մեծությունը:

43. Թիվ 5 հաշվետվության Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.

- 1) **«Ֆոնդը, որին սկսվել են կուտակային վճարներ կատարվել»** սյունակում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնց փայերի հետ մասնակցի փայերը մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը փոխանակվել են՝ ծրագրային մոդուլի միջոցով ընտրությունը փոխելու համար:
- 2) **«Ֆոնդը, որին դադարեցվել են կուտակային վճարներ կատարվել»** սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան կողերը, որոնցում կատարվել են կուտակային վճարներ մինչև հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ծրագրային մոդուլի միջոցով ընտրված ֆոնդի փայերը փոխանակելը «Ֆոնդը, որին սկսվել են կուտակային վճարներ կատարվել» սյունակի 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերով:
- 3) **«Փոխանակման տվյալներ»** սյունակում **«անձանց թիվը»** ենթատողերի «Ֆոնդը, որին դադարեցվել են կուտակային վճարներ կատարվել» 3-8-րդ սյունակներում լրացվում է այն մասնակիցների թիվը, ովքեր մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը փոխանակել են ծրագրային մոդուլի միջոցով ֆոնդի ընտրության արդյունքում ձեռք բերված փայերը 1-ին սյունակում նշված ֆոնդերի փայերով:
- 4) **«Փոխանակման տվյալներ»** սյունակում **«Փոխանակված գումարը»** ենթատողերի «Ֆոնդը, որին դադարեցվել են կուտակային վճարներ կատարվել» 3-8-րդ սյունակներում լրացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համապատասխան ֆոնդերի միջև փոխանակված գումարների մեծությունները:
- 7) **«Ընդամենը»** սյունակի «Ֆոնդը, որին սկսվել են կուտակային վճարներ կատարվել» սյունակի 2-7-րդ տողերում լրացվում է այն մասնակիցների ընդհանուր թիվը, ովքեր հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմում են ներկայացրել մասնակիցների ռեեստրը վարողին՝ 2-7-րդ տողերում նշված տվյալ ֆոնդերի փայերի հետ իրենց փայերը փոխանակելու համար: Սույն սյունակի «փոխանակված գումարը» ենթատողերում լրացվում է «Ֆոնդը, որին դադարեցվել են կուտակային վճարներ կատարվել» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում նշված ֆոնդերի փայերը «Ֆոնդը, որին սկսվել են կուտակային վճարներ կատարվել» 1-ին սյունակում նշված տվյալ ֆոնդի փայերի հետ փոխանակված ընդհանուր գումարը:

8) «**Ընդամենը**» տողի «Ֆոնդը, որին դադարեցվել են կուտակային վճարներ կատարվել» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է այն մասնակիցների ընդհանուր թիվը, ովքեր հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ դադարեցրել են կուտակային վճարներ կատարել 3-8-րդ սյունակներում նշված տվյալ ֆոնդին՝ իրենց փայերը 2-7-րդ տողերում նշված ֆոնդերի փայերի հետ փոխանակելու արդյունքում: Սույն տողի «փոխանակված գումարը» ենթատողի «Ֆոնդը, որին դադարեցվել են կուտակային վճարներ կատարվել» սյունակի 3-8-րդ ենթասյունակներում լրացվում է տվյալ ֆոնդի փայերը 2-7-րդ տողերում նշված ֆոնդի փայերի հետ փոխանակման գումարի ընդհանուր մեծությունը: